ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ԳՅՈՒՄՐՈՒ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ГЮМРИЙСКАЯ ДЕТСКО-ЮНОШЕСКАЯ СПОРТИВНАЯ ШКОЛА ФЕХТОВАНИЯ
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОМЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

<<07>> Հոկտեմբերի 2024 թվական

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի մարտի 20-ին կնքվել է N 2 «ԳՄՍՄԴ-ՄԱԱՊՁԲ-24/2-2» ծածկագրով տնտեսական ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետով սահմանված է՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն մատակարարը հրաժարվել է ապրանքների մատակարարումից:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի N 2 «ԳՄՍՄԴ-ՄԱԱՊՁԲ-24/2-2»-ի ՝ 2.1.1 կետի՝ պայմանագիրը միակողմանի լուծարվել է, քանի որ վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը .

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով. Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**